Կարգապահական գործ թիվ ԿԳ-17003

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 157-րդ ԿԳ մասնակի դռփակ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/92-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ԵԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Կարեն Սարդարյանի և Տարոն Սիմոնյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ պատասխանող փաստաբան Տիգրան Եգորյանի և նրա ներկայացուցիչների,

քննության առնելով փաստաբան Տիգրան Եգորյանի (արտոնագիր թիվ 1187) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

16.01.2017թ. Պալատ են դիմել «Ազատություն և Հայրենիք» հիմնադրամի (**այսուհետ՝ Հիմնադրամ**) հոգաբարձուների խորհրդի անդամներ Արուսյակ Հայրապետյանը և Թեհմինե Ենոքյանը (**այսուհետ նաև՝ Դիմող կամ Դիմողներ**), որոնք հայտնել են, որ «Ազատություն և հայրենիք» հիմնադրամի շահառու է հանդիսանում 2016 թվականի հուլիսի 31-ից կալանավայրում գտնվող Արթուր Սարգսյանը («Հաց բերողը»):

Դիմող կողմը նշել է, որ Հիմնադրամն Արթուր Սարգսյանի գործով 2016 թվականի դեկտեմբերի 22-ին ՀՀ քննչական մարմիններին ներկայացրել է նամակ՝ իրազեկելով, որ Արթուր Սարգսյանը տառապում է Բեխտերևի հիվանդությամբ, ինչը բացառում է պատիժը կալանավայրում կրելը:

Դիմող կողմը հայտնել է, որ Արթուր Սարգսյանի ընտանիքի անդամների հավաստմամբ, նրա հիվանդության մասին համապատասխան փաստաթղթերը հանձնվել են Արթուր Սարգսյանի փաստաբան Տիգրան Եգորյանին, մինչդեռ, նշված տեղեկատվությունը փաստաբանն իրավասու մարմիններին չի ներկայացրել:

Դիմող կողմը վկայակոչել է նաև www.youtube.com կայքում 24.12.2016թ. ներբեռնված «Արթուր Սարգսյան I Խղճի բանտարկյալ» վերնագրված տեսանյութը **(այսուհետ՝ Տեսանյութ)**[1], որն արտացոլում է Արթուր Սարգսյանի ընտանիքի անդամների (մոր և եղբոր) հարցազրույցը, այդ թվում՝ Արթուր Սարգսյանի մոտ Բեխտերևի հիվանդության մասին:

Դիմողները նաև անհանգստություն են հայտնել այն մասին, որ Արթուր Սարգսյանի փաստաբանն առանց ներքին ատյանները սպառելու, դիմել է ՄԻԵԴ:

Դիմելով Պալատ՝ Դիմողները խնդրել են միջոցներ ձեռնարկել փաստաբան Տիգրան Եգորյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար:

Դիմող կողմը 01.02.2017 թվականին Պալատ մուտքագրված մեկ այլ գրությամբ (մուտք № 197-17) ներկայացրել է ՀՀ հատուկ քննչական ծառայության 26.01.2017թ. թիվ 18-40կգ-17 գրությունը, որով Հիմնադրամի նախագահին հայտնել են, որ Արթուր Սարգսյանի վերաբերյալ Հիմնադրամի 22.12.2016թ. գրությամբ տեղեկությունը ստանալուց հետո 26.12.2016թ. որոշմամբ Արթուր Սարգսյանի վերաբերյալ նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, իսկ 30.12.2016թ. ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունից ստացվել է բժշկական կոնսիլիումի եզրակացությունը, որի համաձայն Արթուր Սարգսյանի մոտ ախտորոշվել է հիվանդություն, ինչը նվազեցնում է վերջինիս կողմից քննությունից խուսափելու, նոր հանցանք կատարելու հավանականությունը, և նույն օրը քրեական գործի նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի որոշմամբ Արթուր Սարգսյանի նկատմամբ ընտրված կալանավորումը փոփոխվել և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 16.02.2017թ. թիվ 22-Ա/ԿԳ-17003 որոշմամբ փաստաբան Տիգրան Եգորյանի (արտոնագիր թիվ 1187) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4 որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 2.6.1 և 2.7.2 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

20.02.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Կարեն Քամալյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Դիմողները կարգապահական գործի քննության ընթացքում ըստ էության արտահայտել են դիմումով ներկայացված դիրքորոշումը:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Սույն կարգապահական գործի քննության ընթացքում փաստաբան Տիգրան

[1] https://www.youtube.com/watch?v=t_4NApNycUM

Եգորյանը (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) առարկել է Դիմողի կողմից ներկայացված հանգամանքների դեմ՝ ըստ էության նշելով, որ Արթուր Սարգսյանին կալանքից ազատելու հիմք է հանդիսացել ոչ թե Դիմողի կողմից ՀՀ Հատուկ քննչական ծառայություն ներկայացված դիմումը, այլ իր կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված դիմումը, որը պարունակում էր նաև Արթուր Սարգսյանի հիվանդության վերաբերյալ տեղեկատվություն, և հենց Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ՀՀ կառավարությանը նշված հարցի կապակցությամբ ուղղված հարցումների արդյունքում է Արթուր Սարգսյանն ազատվել կալանքից, իսկ Արթուր Սարգսյանի հարազատները քրեական գործի ընթացքից առհասարակ տեղյակ չեն եղել, ուստի նրանց ներկայացրած փաստերը չեն կարող հիմք հանդիսանալ կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար:

Փաստաբանը նշել է, որ իր կողմից բազմաթիվ գործողություններ են կատարվել Արթուր Սարգսյանի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով, ուստի իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը բացակայում են:

Փաստաբանը նշել է նաև, որ Արթուր Սարգսյանի մոտ կալանավայրում գտնվելուն խոչընդոտող հիվանդության առկայության մասին տեղեկացել է իրեն նշված փաստաթղթերը հանձնելու ժամանակ՝ 03.08.2016 թվականին, իսկ իր կողմից առաջին ատյանի դատարանից բացի որևէ այլ ներպետական մարմնին նշված փաստաթուղթը ներկայացնելու վերաբերյալ տեղեկություն չի ներկայացվել:

Կարգապահական գործի քննության ընթացքում ինքնաբացարկ են հայտնել Խորհրդի անդամներ Հրանտ Անանյանը և Հարություն Հարությունյանը:

Պատասխանողի կողմից բացարկի միջնորդություններ են ներկայացվել Խորհրդի անդամներ Սիմոն Բաբայանին, Կարեն Սարդարյանին, Կարապետ Աղաջանյանին, Մելանյա Առուստամյանին, Սեդրակ Ասատրյանին և Նելլի Հարությունյանին, որոնք Խորհրդի կողմից մերժվել են:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով Պատասխանողը միջնորդել է որպես վկա հարցաքննել Մարտուն Փանոսյանին, Հարություն Հարությունյանին և Հրանտ Անանյանին, մեկ այլ միջնորդությամբ՝ Անի Կաղինյանին, Նատալյա Յադերնիին, Բայանդուր Պողոսյանին և Վահե Գրիգորյանին, որոնք Պալատի խորհրդի կողմից մերժվել են:

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ՝

- որպես վկա հրավիրվող անձանց՝ սույն կարգապահական գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատման կամ ժխտման վերաբերյալ տեղեկություններին տիրապետելու հանգամանքի վերաբերյալ հիմնավորումներ Պատասխանողը չի ներկայացրել,

- Պալատի կարգապահական նիստերի տեսաձայնագրություններն այլ անձանց կողմից հեռարձակվել են անձանց անորոշ շրջանակի հասանելիությամբ, հետևաբար Պալատի խորհուրդը հնարավորություն չէր ունենա Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ՝ Կարգ)** 29-րդ հոդվածի 8-րդ մասի կանոնով հետապնդած նպատակին հասնել (բացառել վկաների իրազեկված լինելու հնարավորությունը):

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը.</u>

<u>եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

20.04.2017թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստողը կազմել է եզրակացություն, որում նշել է, որ Կարգապահական գործի համար էական նշանակություն ունեցող փաստերն են՝ փաստաբան Տ. Եգորյանը Արթուր Սարգսյանի հարազատներից, վերջիններիս պնդմամբ ունեցե՞լ է արդյոք նրա հիվանդության վերաբերյալ փաստաթղթերը, որոնք և չի ներկայացրել պատկան մարմիններին:

Նախապատրաստողը նշել է, որ վորոհիշյալ փաստը հնարավոր չի եղել պարզել, քանի որ նախաքննական մարմինն իր հարցմանը սպառիչ պատասխան չի տվել, քանի որ այն համարել է նախաքննանության գաղտնիք: Բացի այդ, պատասխանող Տիգրան Եգորյանի կողմից բացատրություն չի տրվել, որպեսզի պարզվեր, թե արդյո՞ք Արթուր Սարգսյանի հիվանդության փաստաթղթերը, հատկապես «Բեխտերևի» հիվանդության վերաբերյալ փաստաթուղթը նրա ձերբակալումից իրոք 4 օր անց տրվել է նրան, թե՞ ոչ: Եվ եթե տրվել է, ապա ի՞նչն է պատճառը, որ հիշյալ փաստաթուղթը նա չի ներկայացրել նախաքննական մարմնին: Հիշյալ հանգամանքի վերաբերյալ մանրամասներ հնարավոր չի եղել պարզել, քանի որ դիմող կողմը նույնպես չի ներկայացել բացատրություններ տալու:

Դիմողները 10.06.2017թ. ներկայացրել են եզրակացության վերաբերյալ առարկություններ, որի համաձայն Դիմողներն իրենց անհամաձայնությունն են հայտնել եզրակացության մեջ շարադրված որոշակի փաստական հանգամանքների վերաբերյալ:

Մասնավորապես, Դիմողները նշել են կարգապահական գործը նախապատրաստողի կողմից եզրակացության «Իրեղեն և այլ ապացույցներ» խորագրի շրջանակներում անդրադարձ է կատարվել Արթուր Սարգսյանի հարազատների կողմից «Յություբ» ինտերնետային կայքում արված հայտարարությանը, ինչը սակայն, ըստ կարգապահական գործը նախապատրաստողի, չի ապացուցում այն հանգամանքը, որ փաստաբան Եգորյանը ստացել է Արթուր Սարգսյանի հիվանդության վերաբերյալ փաստաթղթեր: Նախապատրաստողը եզրակացությամբ նշել է վերոգրյալ հանգամանքի մասին, սակայն այն տեղ չի գտել դրա վերջնական հետևությունների մեջ:

Դիմողները ներկայացրել են նշված հանգամանքը հիմնավորող այլ ապացույցներ՝ միևնույն ժամանակ նշելով, որ Արթուր Սարգսյանի փաստաբանները, մասնավորապես՝ Տիգրան Եգորյանը, նախապես իմանալով նրա՝ Բեխտերևի հիվանդությամբ տառապելու մասին, նրան կալանքից ազատելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու փոխարեն սահմանափակվել են միայն «Արթուր Սարգսյանին պատշաճ բուժզննություն և օգնություն տրամադրելու համար նրան տեղափոխել քաղաքացիական հիվանդանոց, ապահովել պատշաճ բուժում ու խնամք» պահանջելով: Դիմողները նշել են նաև, որ փաստաբանը չի փորձել սպառել ներպետական միջոցներն այն պայմաններում, երբ Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու արդյունքում որոշակի ժամանակ էր անցնելու, իսկ ժամանակը միայն Արթուր Սարգսյանի կյանքի դեմ էր:

20.04.2017թ. կարգապահական գործը հանձնվել է Խորհրդի անդամ Հրանտ Անանյանին, որը հայտնել է ինքնաբացարկ:

12.06.2017թ.կարգապահական գործը հանձնվել է Խորհրդի անդամ Կարեն Մեժլումյանին:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 2017 թվականի հունիսի 13-ին, ժամը՝ 18:30-

ին, 2017 թվականի հուլիսի 04-ին, ժամը՝ 19:30-ին, 2017 թվականի հուլիսի 11-ին, ժամը՝ 20:00-ին, 2017 թվականի հուլիսի 27-ին, ժամը՝ 19:30-ին, 2017 թվականի հոկտեմբերի 05-ին, ժամը՝ 18:30-ին, 2017 թվականի հոկտեմբերի 10-ին, ժամը՝ 20:00-ին, 2017 թվականի հոկտեմբերի 16-ին, ժամը՝ 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Կարգի 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը որոշ ապացույցներ հետազոտել է դռնփակ նիստով:

Խորհուրդն ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1) Արթուր Սարգսյանը հանդիսացել է փաստաբան Տիգրան Եգորյանի պաշտպանյալը:

Այս փաստը հաստատվում է Տիգրան Եգորյանի բացատրությամբ և դատարանից ստացված նյութերով:

2) Արթուր Սարգսյանը 31.07.2016 թվականից մինչև 30.12.2016 թվականը գտնվել է անազատության մեջ:

Մասնավորապես՝ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Դ.Գրիգորյան) թիվ ԵԱՔԴ/0542/06/16 03.08.2016թ. «Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության մասին» որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է և Արթուր Ռոբերտի Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով: Կալանքի ժամկետի սկիզբը հաշվվել է 2016թ. հուլիսի 31-ից:

Նույն դատարանի (դատավոր Դ.Գրիգորյան) թիվ ԵԱՔԴ/0542/06/16 24.09.2016թ. «Մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ միջնորդությունը քննության մասին» որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է և Արթուր Ռոբերտի Սարգսյանի կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 2 ամսով:

Նույն դատարանի (դատավոր Դ.Գրիգորյան) թիվ ԵԱՔԴ/0542/06/16 24.11.2016թ. «Մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ միջնորդությունը քննության մասին» որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է և Արթուր Ռոբերտի Սարգսյանի կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 2 ամսով:

Այս փաստերը հաստատվում են Տիգրան Եգորյանի բացատրությամբ, դատարանից ստացված նյութերով, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներով և վարույթն իրականացնող մարմնի՝ խափանման միջոց

կալանավորումը փոխելու և ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոց կիրառելու մասին որոշմամբ:

3) Արթուր Սարգսյանը տառապել է հիվանդությամբ, որը կոչվում է «Բեխտերևի հիվանդություն»:

Այս փաստը հաստատվում է Դիմողի և Պատասխանողի բացատրություններով, ՀՔԾ 26.01.2017թ. գրությամբ, փաստաբան Տիգրան Եգորյանի կողմից ՄԻԵԴ-ին ուղղված դիմումի թարգմանությամբ, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներով:

4) Հիմնադրամը 22.12.2016թ. դիմել է թիվ 58212116 քրեական գործը վարող նախաքննության մարմնին և ներկայացրել է Արթուր Սարգսյանի առողջական վիճակի մասին տեղեկություններ, ինչի հիման վրա 2016թ. դեկտեմբերի 26-ի որոշմամբ Արթուր Սարգսյանի վերաբերյալ նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն՝ միջգերատեսչական հանձնաժողովի կազմով այն կատարելու հանձնարարությամբ:

Այս փաստը հաստատվում է դիմող կողմի բացատրությամբ և ՀՀ հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնեական հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալի 26.01.2017թ. գրությամբ:

5) 2016թ. դեկտեմբերի 30-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունից ստացված բժշկական կոնսիլիումի եզրակացության համաձայն Արթուր Սարգսյանի մոտ ախտորոշվել է հիվանդություն, ինչը նվազեցնում է վերջինիս կողմից քննությունից խուսափելու, նոր հանցանք կատարելու հավանականությունը, հետևաբար նույն օրը դատախազի որոշմամբ Արթուր Սարգսյանի նկատմամբ ընտրված կալանավորումը փոփոխվել է և նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է ստորագրություն չհեռանալու մասին:

Այս փաստը հաստատվում է ՀՀ հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնեական հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալի 26.01.2017թ. գրությամբ:

6) Արթուր Սարգսյանի փաստաբան Տիգրան Եգորյանը 17.12.2016թ. դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանին խնդրելով՝ բաժնի կամ պալատի նախագահին կամ պաշտոնեական պարտականություններ կատարող դատավորին Հայաստանի Կառավարությանը հանձնարարել՝

ա) դիմողին անմիջապես տրամադրել անհրաժեշտ բժշկական սպասարկում, օգնություն և խնամք այն հիվանդությունների առնչությամբ, որոնցով դիմողը տառապում է, և անհրաժեշտության դեպքում կազմակերպել նրա բուժումը մասնագիտացված քաղաքացիական բժշկական հիմնարկում, և

բ) անմիջապես քննել դատաքննության ներկայանալու դիմողի երաշխիքները՝ դադարեցնելու համար այն վերաբերմունքը, որին դիմողը ենթարկվում է:

Այս փաստը հաստատվում է Տիգրան Եգորյանի կողմից ՄԻԵԴ-ին ուղղված գանգատի թարգմանությամբվ:

7) Փաստաբան Տիգրան Եգորյանը տեղեկացված է եղել իր պաշտպանյալ Արթուր Սարգսյանի մոտ ծանր հիվանդության առկայության, ինչպես նաև ՀՀ կառավարության 825 որոշման կարգավորման մասին:

Այս փաստը հաստատվում է Տիգրան Եգորյանի բացատրությամբ, Տիգրան Եգորյանի կողմից ՄԻԵԴ-ին ուղղված գանգատի թարգմանությամբ, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներով:

8) Արթուր Սարգսյանի պաշտպանների կողմից 02.08.2016-03.08.2016թթ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու դատական նիստի ընթացքում դատարանին ներկայացվել է հիվանդության պատմությունից ռուսերեն լեզվով քաղվածք՝ Բեխտերևի հիվանդության մասին:

Այս փաստը հաստատվում է Տիգրան Եգորյանի բացատրությամբ, դատարանից ստացված նյութերով:

9) Փաստաբան Տիգրան Եգորյանը **2016 թվականի հուլիսի 31-ից մինչև 2016թ. դեկտեմբերի 30-ը** վարույթն իրականացնող մարմնին կամ քրեակատարողական հիմնարկին որևէ միջնորդություն կամ դիմում չի ներկայացրել **կալանավորված անձի նկատմամբ ծանր հիվանդության պատճառով** խափանման միջոցը փոխելու նպատակահարմարության հարցով բժշկական կոնսիլիումի եզրակացություն ստանալու կամ միջգերատեսչական հանձնաժողովի կազմով դատաբժշկական փորձագիտական եզրակացություն ստանալու համար:

Այս փաստը հաստատվում է Տիգրան Եգորյանի բացատրությամբ, դատարանից ստացված նյութերով, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներով, ինչպես նաև վերոհիշյալ ակտիվ վարքագիծը Տիգրան Եգորյանի կողմից դրսևորելու ապացույցների բացակայության փաստով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները</u>.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 13.06.2017թ. տրամադրված N ԸԴՂ/ԿԳ/343-17 տեղեկանքի համաձայն Տիգրան Եգորյանը փաստաբան է հանդիսանում 15.10.2011թ.: Տիգրան Եգորյանի նկատմամբ 2011-2017թթ ժամանակահատվածում 9 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, որոնցով կայացվել են հետևյալ որոշումները՝

- Խորհրդի 04.02.2013թ. թիվ 4-ԿԳ որոշմամբ Տիգրան Եգորյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (Կանոնագրքի 2.3.3. և 6.1.1 ենթակետերի խախտման հատկանիշներով) և վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ նկատողություն, որը մարվել է.
- Խորհրդի 06.06.2013թ. թիվ 24-ԿԳ որոշմամբ Տիգրան Եգորյանի նկատմամբ Կանոնագրքի 2.2. և 6.1.1 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է.
- Խորհրդի 03.03.2016թ. թիվ ԿԳ/46-Ա որոշմամբ Տիգրան Եգորյանի նկատմամբ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է.

- Խորհրդի 03.10.2016թ. թիվ ԿԳ/107-Ա որոշմամբ Տիգրան Եգորյանի նկատմամբ Կանոնագրքի 4.1 ենթակետի հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է:
- Խորհրդի 31.10.2016թ. թիվ ԿԳ/157-Ա որոշմամբ Տիգրան Եգորյանի նկատմամբ Կանոնագրքի 4.1 ենթակետի հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է:
- Խորհրդի 31.10.2016թ. թիվ ԿԳ/158-Ա որոշմամբ Տիգրան Եգորյանի նկատմամբ Կանոնագրքի 4.1 ենթակետի հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է:
- Խորհրդի 11.11.2016թ. թիվ ԿԳ/162-Ա որոշմամբ Տիգրան Եգորյանի նկատմամբ Կանոնագրքի 4.1 ենթակետի հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է:
- Խորհրդի 11.11.2016թ. թիվ ԿԳ/163-Ա որոշմամբ Տիգրան Եգորյանի նկատմամբ Կանոնագրքի 4.1 ենթակետի հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է:
- Խորհրդի 23.11.2016թ. թիվ ԿԳ/188-Ա որոշմամբ Տիգրան Եգորյանի նկատմամբ Կանոնագրքի 2.2.2 ենթակետի հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է, իսկ 2.2.3 ենթակետերի խախտման հատկանիշներով Տիգրան Եգորյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության և վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն (այս գործով խորհրդի որոշումը բողոքարկվել է դատարան):

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Տիգրան Եգորյանին Կանոնագրքի 2.6.1 և 2.7.2 ենթակետերի պահանջները խախտելու համար պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 2.6.1 ենթակետի համաձայն՝ ***օրենքի և մասնագիտական վարվելակերպի պահանջներին համապատասխան՝ փաստաբանը միշտ պետք է գործի ելնելով վստահորդի նպաստավոր շահերից և այդ շահերը պետք է բխեն իր շահերից վեր:***

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ ***փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:***

Կանոնագրքի վերոնշյալ ենթակետերով սահմանված խախտման առկայության կամ բացակայության փաստն արձանագրելու համար Խորհուրդը անհրաժեշտ է համարում ստանալ հետևյալ իրավական հարցադրումների պատասխանները՝

- արդյո՞ք փաստաբան Տիգրան Եգորյանի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցվել է վարույթ հարուցելու հարաբերությունները կարգավորող կանոնների պահանջների պահպանմամբ.

- արդյո՞ք Պատասխանողը գործել է ելնելով իր վստահորդի նպաստավոր շահերից և իր վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն է ցույց տվել իր մասնագիտական կարողությունների սահմաններում.

- արդյո՞ք Արթուր Սարգսյանը հավանություն է տվել Պատասխանողի անգործությանը:

Ա) Արդյո՞ք փաստաբան Տիգրան Եգորյանի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցվել է վարույթ հարուցելու հարաբերությունները կարգավորող կանոնների պահանջների պահպանմամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 39.3. հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«կարգապահական վարույթ հարուցելու առիթների և հիմքերի առկայության դեպքում փաստաբանների պալատի նախագահը որոշում է կայացնում կարգապահական վարույթ հարուցելու մասին առիթը ծագելու պահից մեկ ամսվա ընթացքում»:*

Նույն օրենքի 39.1.-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝* ***1) պետական, տեղական ինքնակառավարման և ոչ պետական մարմինների, ինչպես նաև այլ անձանց դիմումները (բողոքները), ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները.{...}»:***

Նշված նորմի բովանդակությունից բխում է, որ կարգապահական վարույթ հարուցելու առիթ կարող է հանդիսանալ նորմում նշված ցանկացած անձի դիմումը (բողոքը): Խորհուրդն արձանագրում է, որ Կանոնագրքի 2.6.1 և 2.7.2 ենթակետերի խախտման հիմքով հարուցված կարգապահական վարույթները չեն համարվում այնպիսի վարույթներ, որոնք պետք է հարուցվեն միայն վստահորդի բողոքի հիման վրա: Այս տեսակետից, չի բացառվում, որ այլ սուբյեկտներ բարձրաձայնեն փաստաբանի հնարավոր խախտումները, որոնք թույլ են տրվել իրենց վստահորդների նկատմամբ:

Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի նշանակում, որ փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտում և այդ հարցի վերջնական պատասխանը կարող է տրվել միայն կարգապահական վարույթի իրականացման արդյունքում՝ Պալատի խորհրդի համապատասխան որոշմամբ:

Պալատի խորհուրդը, Դիմողների կողմից ներկայացված դիմումը համարում է պատշաճ առիթ ոչ միայն վերոնշյալ, այլ նաև այն տեսանկյունից, որ դիմողները հանդիսանում են «Ազատություն և Հայրենիք» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներ, իսկ Հիմնադրամն ուղիղ կապ է ունեցել Արթուր Սարգսյանի իրավունքների պաշտպանության հետ, մասնավորապես՝ համաձայն ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից «Ազատություն և Հայրենիք» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահին ուղղված 26.01.2017թ. գրության թիվ 58212116 քրեական գործով մեղադրյալ Արթուր Սարգսյանի վերաբերյալ Հիմնադրամի 22.12.2016թ. գրությամբ տեղեկությունները ստացվելուց հետո 26.12.2016թ. Արթուր Սարգսյանի նկատմամբ նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն՝ միջգերատեսչական հանձնաժողովի կազմով այն կատարելու հանձնարարությամբ: Գրությամբ նշվել է նաև, որ քրեական գործի նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի որոշմամբ Արթուր

Սարգսյանի նկատմամբ ընտրված կալանավորումը փոփոխվել է և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին՝ հիմք ընդունելով 30.12.2017թ. ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունից ստացված բժշկական կոնսիլիումի եզրակացությունը:

Այս տեսակետից, Խորհուրդը գտնում է, որ դիմողների բողոքը Օրենքի 39.1.-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջին բավարարող պատշաճ առիթ է:

Բ) Արդյո՞ք Պատասխանողը գործել է ելնելով իր վստահորդի նպաստավոր շահերից և իր վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն է ցույց տվել իր մասնագիտական կարողությունների սահմաններում:

Կանոնագրքի 2.6.1 ենթակետը փաստաբանի վրա պարտականություն է դնում մշտապես գործել՝ ելնելով վստահորդի նպաստավոր շահերից: Վստահորդի նպաստավոր շահերից գործելը ենթադրում է վստահորդի ողջամիտ ջանասիրությունը կիրառել օրենքով չարգելված բոլոր վերաբերելի միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Փաստաբանի այս պարտականությունը ձևակերպված է նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման և պաշտպանության համար: Ձևական բնույթի գործողությունների կատարումը, որոնք, թեկուզև օրինական են, սակայն տվյալ պարագայում օգտակար և արդյունավետ չեն վստահորդի շահերի պաշտպանության համար, չի կարող համարվել փաստաբանի մասնագիտական բարեխղճության ապացույց:

Իրենց գործառույթներն իրականացնելիս փաստաբաններն ունեն ոչ միայն իրավունքներ, այլ նաև առանձնահատուկ պարտականություններ և պարտավորություններ իրենց վստահորդների և դատարանների առջև:

ՄԱԿ-ի 1990թ. *«Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ»*-ի մասին փաստաթղթի համաձայն, փաստաբանների պարտականությունների մեջ է մտնում, *inter alia*, «***իրենց վստահորդներին բոլոր պատշաճ միջոցներով օգնելը, և նրանց շահերը պաշտպանելու ուղղությամբ իրավական գործողություններ ձեռնարկելը***» (կետ 13(բ), իսկ իրենց վստահորդների իրավունքները պաշտպանելիս ու արդարադատության իրականացմանը աջակցելիս պարտավոր են պաշտպանել ազգային և միջազգային իրավունքով պաշտպանված մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, և պետք է մշտապես գործեն ազատորեն և ջանասիրաբար՝ օրենքի և իրավաբանի մասնագիտության ճանաչված սկզբունքների և էթիկական նորմերի համաձայն (կետ 14):

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» 25.10.2000թ.Rec(2000)21 հանձնարարականի համաձայն, ***փաստաբանները իրենց վստահորդների առջև պարտավոր են ձեռնարկել իրավական գործողություններ իրենց վստահորդի իրավունքները և շահերը պաշտպանելու, հարգելու և իրացնելու ուղղությամբ*** (կետ 3(գ)):

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի)՝ Եվրոպական փաստաբանների վարքագծի կանոնակարգի համաձայն՝ ***փաստաբանը պետք է իր վստահորդին խորհրդակցի և նրա շահերը ներկայացնի «արագորեն, բարեխղճորեն և ջանասիրաբար», և փաստաբանը պետք է անձնական պատասխանատվություն վերցնի իր վրա վստահորդի***

հրահանգները կատարելու ուղղությամբ, և պետք է իր վստահորդին տեղեկացված պահի այն խնդրի զարգացումների մասին, որը նրան վստահվել է (կետ 3.1.2.):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ փաստաբանների հատուկ դերակատարումը, արդարադատության իրականացման հարցում որպես անկախ մասնագետների, իր մեջ ներառում է մի շարք պարտավորություններ, հատկապես այն դեպքերում, երբ այն վերաբերում է նրանց վարքագծին: Չնայած փաստաբանները ենթակա են սահմանափակումների իրենց մասնագիտական գործունեության մեջ, որոնք պետք է լինեն շրջահայաց, արդար և ազնիվ, նրանք միաժամանակ օգտվում են բացառիկ իրավունքներից և արտոնություններից, *(Մորիսն ընդդեմ Ֆրանսիայի*, թիվ 29369/10, ՄԻԵԴ, § 133): Փաստաբանը ոչ միայն պարտավոր է իրավաբանական ներկայացուցչությունը կատարել բարեխղճորեն, այլ նաև իր վստահորդի շահերը պաշտպանել եռանդուն կերպով, որը նշանակում է, որ երբեմն նրանք պետք է որոշում կայացնեն, թե արդյոք նպատակահարմար է առարկել կամ բողոքել դատարանի գործողությունների դեմ (Տե՛ս *Մորիս*, § 137):

Խորհուրդը չի կարող սահմանել այն անհրաժեշտ գործողությունների ծավալը, որը փաստաբանը պարտավոր է կատարել, քանի որ յուրաքանչյուր գործով կարող է այն տարբեր լինել՝ ելնելով տվյալ գործի առանձնահատկություններից և հանգամանքներից: Սակայն գոյություն ունի գործողությունների որոշակի նվազագույն չափ, որը ողջամիտ, անաչառ դիտորդի տեսանկյունից փաստաբանը պարտավոր է կատարել իր վստահորդի կենսական շահերի և հիմնական իրավունքների պաշտպանության ուղղությամբ, ինչը և կվկայի առնվազն փաստաբանի բարեխղճության առերևույթ առկայության մասին: Այս առումով, փաստաբանի մասնագիտական բարեխղճության չափանիշներ է սահմանում Կանոնագրքի 2.7.2 ենթակետը, որը նախատեսում է փաստաբանի կողմից վստահորդի հանձնարարության բարեխիղճ կատարման հետևյալ պայմանները՝

1. իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն.

2. վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն.

3. հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Իրավունքի համապատասխան ճյուղի իմացությունը նշանակում է բավարար իրազեկվածություն ոչ միայն իրավունքի տվյալ ճյուղի նորմերի և դրանցով կարգավորվող հասարակական հարաբերությունների վերաբերյալ, այլև դրանք համադրելու, վերլուծելու, դրանցում վստահորդի շահերից բխող բացերի իմացություն, մի քանի իրավական լուծումների մեջ վստահորդի շահերին լավագույնս համապատասխանող լուծման ընտրություն և իրավունքի տվյալ ճյուղից բխող պրակտիկայի իմացություն, այդ թվում իրավասու մարմինների կողմից իրավունքի տվյալ ճյուղի նորմերին տրվող գործնական մեկնաբանության և կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ:

Վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրության փաստաբանի պարտականությունը նշանակում է վստահորդի խնդրին առնչվող բոլոր փաստերի ուսումնասիրություն և վերլուծություն:

Հանձնարարությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարման պարտականությունն արդեն վերոնշյալ երկու

պարտականություններից ուղղակիորեն հետևող գործողությունների կատարումն է, ինչը ենթադրում է փաստաբանի մոտ վստահորդի խնդրի վերաբերյալ անհրաժեշտ պատկերացման ձևավորում և իրավունքի համապատասխան ճյուղի շրջանակներում դրա լուծման ուրվագծում, վստահորդի շահերի սպասարկման արդյունավետ ուղիների ու եղանակների կանխատեսում, որի հիման վրա փաստաբանը պարտավոր է ձեռնարկել համապատասխան և համարժեք իրավական և փաստացի միջոցներ, որոնք պետք է լինեն իրական և արդյունավետ, այլ ոչ թե ձևական և պատրանքային:

Տվյալ պարագայում, Պալատի խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը պետք է կատարեր իր վստահորդի կենսական շահերի և հիմնական իրավունքի պաշտպանությանն ուղղված նվազագույն ողջամիտ գործողություններ:

Այդ գործողությունների շրջանակը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, որի 73-րդ, 243-րդ, 258-րդ և 287-րդ հոդվածները նախատեսում են միջնորդություններ ներկայացնելու, փորձաքննություն անցկացնելու, կալանավորման՝ որպես խափանման միջոցի կիրառման և բողոքարկման կարգը և դրանից բխող պաշտպանի գործողությունները: Բացի այդ, խիստ կարևոր է ՀՀ կառավարության 26.05.2006 թվականի թիվ 825-Ն որոշումը, որի թիվ 2 հավելվածով հաստատված է «Պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկը», որով Արթուր Սարգսյանի մոտ առկա է Բեխտերևի հիվանդությունը ևս նախատեսված է, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.12.2003թ. N 1636-Ն որոշմամբ հաստատված «Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովներ ստեղծելու կարգ»-ը, որը նախատեսում է միջգերատեսչական հանձնաժողովի միջոցով դատաբժշկական փորձաքննություն անցկացնելու հիմքերը:

Պալատի խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը պատշաճ չի ուսումնասիրել իր վստահորդ Արթուր Սարգսյանի գործի բոլոր հանգամանքները, այլապես կկարևորեր վերջինիս մոտ խնդրո առարկա հիվանդության՝ տևական ժամանակ առկայությունը, դրա լրջությունն Արթուր Սարգսյանի կյանքի և առողջության վերաբերյալ՝ ընդհուպ մինչ կալանավորումը վերացնելու անհրաժեշտությունը:

Հատկանշական է, որ Պատասխանողը ՄԻԵԴ-ին ուղղված իր դիմումի խնդրամասում միջնորդել է՝

ա) դիմողին անմիջապես տրամադրել անհրաժեշտ բժշկական սպասարկում, օգնություն և խնամք այն հիվանդությունների առնչությամբ, որոնցով դիմողը տառապում է, և անհրաժեշտության դեպքում կազմակերպել նրա բուժումը մասնագիտացված քաղաքացիական բժշկական հիմնարկում, և

բ) անմիջապես քննել դատաքննության ներկայանալու դիմողի երաշխիքները՝ դադարեցնելու համար այն վերաբերմունքը, որին դիմողը ենթարկվում է:

ՄԻԵԴ-ին ուղղված այս դիմումից հետևում է որ, Պատասխանողն այս հարցերը բարձրացրել է 2016թ. դեկտեմբերին, իսկ մինչ այդ ներպետական մարմինների առջև տևական ժամանակ այդ հարցերը չի բարձրացրել:

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Տիգրան Եգորյանի կողմից՝ ներպետական իրավասու մարմիններին Արթուր Սարգսյանի շահի բավարարմանն ուղղված միջնորդություններ (դիմումներ) չներկայացնելու անգործությունը հակասում է Կանոնագրքի վերոհիշյալ կանոններին:

Պատասխանողը **2016 թվականի հուլիսի 31-ից մինչև 2016թ. դեկտեմբերի 30-ը վարույթն իրականացնող մարմնին կամ քրեակատարողական հիմնարկին որևէ միջնորդություն կամ դիմում չի ներկայացրել կամ հիվանդության վերաբերյալ առկա տվյալը** (նշված հիվանդության վերաբերյալ տեղեկանքը) **փաստ դարձնելուն**

ուղղած գործողություններ և դրանից բխող ածանցյալ ջանքեր չի գործադրել պատիժը կրելուն (կալանքի տակ գտնվելուն) խոչընդոտող ծանր հիվանդությամբ տառապող Արթուր Սարգսյանի կալանավորման տեսակի խափանման միջոցը այդ հիմքով վերացնելու (փոփոխելու) վերաբերյալ, մինչդեռ նշվածը բավականին տևական ժամկետ է՝ հատկապես, երբ անձը այդ ընթացքում տառապում է ծանր հիվանդությամբ:

Ներպետական իրավասու մարմիններին Արթուր Սարգսյանի շահերի բավարարմանն ուղղված գործողությունների իրականացման անգործությունը վկայում է այն մասին, որ Պատասխանողը չի իրականացրել իր պաշտպանյալի գործի հանգամանքների համապարփակ և բազմակողմանի վերլուծություն՝ նրան վերաբերելի և նպաստավոր իրավանորմերը ճշգրիտ ընտրելու համար:

Ելենելով վերոգրյալից՝ Պալատի խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը չի իրականացրել նաև հանձնարարության պատշաճ կատարմանն ուղղված գործողություններ: Ընդ որում, այս դեպքում էական չէ Պատասխանողի կողմից իրականացված փաստացի գործողությունների ծավալը, այլ կարևոր է այն, թե Արթուր Սարգսյանի շահերի լավագույն պաշտպանության, այն է՝ տվյալ պարագայում վերջինիս նկատմամբ կալանավորումը՝ որպես խափանման միջոց վերացնելու և բուժման համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու պահանջի ներկայացման և պաշտպանության համար:

Եթե Պալատի խորհուրդը բավարար համարեր միայն, թե արդյոք պաշտպանը արտահայտել է դիրքորոշում վարույթի ընթացքում, և քննարկման առարկա չդարձներ, թե արդյոք վերջինս դրսևորել է նաև անհրաժեշտ ջանասիրություն օրենքով սահմանված իր առաքելությունն իրականացնելիս, ապա քրեական գործով միայն իր վստահորդի անմեղ լինելու մասին պաշտպանի հայտարարությունը պետք է բավարար համարվեր և Խորհրդին իրավունք չտրվեր քննարկելու պաշտպանի անգործությունը (օրինակ՝ այնպիսի հանգամանքներ, ինչպիսին են, եթե պաշտպանը ճառ չի ներկայացրել, չի առարկել իր վստահորդի դեմ ներկայացված միջնորդությունների դեմ, միջնորդություններ չի ներկայացրել և այլն): Հետևաբար, սույն գործը քննելիս, Պալատի խորհուրդն էական է համարում ուսումնասիրել թե արդյոք պաշտպան Տիգրան Եգորյանը դրսևորել է անհրաժեշտ ջանասիրություն՝ իր վստահորդ Արթուր Սարգսյանի առողջության հետ կապված գործողությունների համատեքստում, նկատի ունենալով, որ Արթուր Սարգսյանը նախկինում տառապել է այնպիսի հիվանդությամբ, որն անհամատեղելի է եղել կալանավորման հետ: Տվյալ դեպքում Խորհուրդը գտնում է, որ պաշտպանը պարտավոր էր կատարել որոշակի նվազագույն գործողություններ իր վստահորդի կենսական շահի և հիմնական իրավունքի պաշտպանության ուղղությամբ:

Պատասխանողը, որպես հիմնավորում, գործի քննության ընթացքում նշել է, որ Արթուր Սարգսյանի մոտ կալանքի տակ գտնվելուն խոչընդոտող հիվանդության առկայության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացրել է դատարանին, կատարել է վստահորդի շահերի պաշտպանությանն ուղղված բազմաթիվ գործողություններ: Մինչդեռ, Խորհուրդն արձանագրում է, որ փաստաբանի ձևական և ոչ նպատակային նույնիսկ բազմաթիվ գործողությունները, որոնք չեն բխում վստահորդի նպաստավոր շահերից, չեն կարող համարվել բավարար փաստաբանի կողմից իր վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալու և իր վստահորդի նպաստավոր շահերից գործելու տեսանկյունից:

Գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ փաստաբանի կողմից գիտակցված է եղել նշված հիվանդության մասին առկա փաստաթղթերը վստահորդի շահերի պաշտպանության համար պիտանի լինելու հանգամանքը, ինչի մասին է վկայում փաստաբանի կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ներկայացված դիմումի հիմքում նշված հիվանդության առկայության մասին փաստաթղթերը վկայակոչելը: Մինչդեռ, փաստաբանը պիտանի և արդյունավետ միջոց չի օգտագործել ներպետական ատյաններում իր վստահորդի շահերի պաշտպանության համար, իսկ նրա օգտագործած միջոցը, այն է՝ դատական նիստի ժամանակ ռուսերեն լեզվով (ոչ պաշտոնական՝ հայերեն լեզվով) պարզապես տեղեկատվություն ներկայացնելը (**<u>ի թիվս այլ փաստաթղթերի և առանց շեշտելու դրա՝ կալանքի կիրառմանը խոչընդոտելու հանգամանքը</u>**) ինքնին չի կարող հիմք հանդիսանալ փաստաբանի կողմից հիվանդության հիմքով վստահորդին կալանքից ազատելուն ուղղված անհրաժեշտ և բավարար գործողություններ գնահատելու համար:

Միայն կալանքը վերացնելուն ուղղված պաշտպանական կողմի ընդհանրական գործողությունները Պալատի Խորհուրդը բավարար չի համարում սույն դեպքում, քանի որ քրեադատավարական օրենսդրությունը և ենթաօրենսդրական ակտերը, այդ թվում՝ ՀՀ կառավարության 04.12.2003թ. N 1636-Ն որոշումը և ՀՀ կառավարության 26.05.2006 թվականի թիվ 825-Ն որոշումը (որի թիվ 2 հավելվածով հաստատված է «Պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկը»), հնարավորություն էին տալիս քննարկել նաև կալանքը վերացնելու հարցը՝ պայմանավորված Արթուր Սարգսյանի՝ ծանր հիվանդությամբ (Բեխտերևի հիվանդություն) տառապելու հանգամանքով:

ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշմամբ հաստատված «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգ»-ի 73-րդ կետի համաձայն՝ ***ախտորոշման և բուժման ընթացքում առաջացած բարդ հարցերը պարզաբանելու համար կարող են կազմակերպվել բժիշկ-մասնագետների խորհրդատվություններ և <u>կոնսիլիումներ</u>***:

Հատկանշական է նաև ՀՀ կառավարության 04.12.2003թ. N 1636-Ն որոշմամբ հաստատված «Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովներ ստեղծելու կարգ»-ի 1-ին կետը, ըստ որի՝ *Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի համաձայն պատիժը պայմանականորեն չկիրառելու,* ***<u>կալանավորված անձի նկատմամբ ծանր հիվանդության պատճառով խափանման միջոցը փոխելու նպատակահարմարության</u>****, ինչպես նաև բժշկական՝ ոչ հոգեբուժական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հետ կապված հարցերը լուծելու նպատակով դատաբժշկական փորձաքննությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից՝ հանձնաժողովային կարգով..*:

Գործի նյութերից պարզ է դարձել, որ Արթուր Սարգսյանը կալանքից ազատվել է (խափանման միջոցը փոխվել է) **<u>բժշկական կոնսիլիումի եզրակացության համաձայն</u>**, իսկ Հիմնադրամի գրության հիման վրա նշանակվել է դատաբժշկական

փորձաքննություն՝ միջգերատեսչական հանձնաժողովի կազմով այն կատարելու հանձնարարությամբ:

Այստեղից հետևում է, որ ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 4-ի N 1636-Ն և 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշումներով նախատեսված են եղել առնվազն երկու «գործիք» ազդելու համար Արթուր Սարգսյանի խափանման միջոցի փոփոխմանը՝ 1) բժշկական կոնսիլիումը, 2) միջգերատեսչական հանձնաժողովի կազմով դատաբժշկական փորձաքննությունը:

Պալատի խորհրդին պատասխանող կողմը չի ներկայացրել որևէ ապացույց, ինչով կհաստատվեր, որ Պատասխանողը նման միջնորդություններ է ներկայացրել:

Պալատի խորհուրդը նշում է, որ նման միջնորդություններ ներկայացնելու փաստն ինքնին չէր կարող երաշխավորել, որ վարույթն իրականացնող մարմինը կբավարարեր այդ միջնորդությունները, սակայն փաստաբանը՝ տեսադաշտում ունենալով իր վստահորդի՝ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշման 2-րդ հավելվածում նշված հիվանդության մասին տեղեկություններ և արձանագրելով իր վստահորդի առողջության վատթարացման փաստեր, պետք է բավարար ջանասիրություն գործադրեր և փորձեր սպառել նաև այս միջոցները:

Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Տիգրան Եգորյանը ողջամիտ նվազագույն ջանքեր չի կիրառել Արթուր Սարգսյանի առողջության պահպանման, նրա շահերն արդյունավետ պաշտպանելու տեսակետից:

Վերոգրյալից հետևում է, որ փաստաբանը չի գործել՝ ելնելով վստահորդի նպաստավոր շահերից, բարեխիղճ իրավական օգնություն ցույց չի տվել իր վստահորդին, անհրաժեշտ նվազագույն գործողություններ չի կատարել նրա իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու համար:

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ փաստաբան Տիգրան Եգորյանի անգործություն դրսևորելը չի կարող արդարացնել պետական այն մարմնին, որը պարտավոր էր Արթուր Սարգսյանի առողջության հարցով պատշաճ վարքագիծ դրսևորել:

Գ) Արդյոք Արթուր Սարգսյանը հավանություն է տվել Պատասխանողի անգործությանը:

Խորհուրդը հարկ է համարում անդրադառնալ վստահորդի կողմից փաստաբանի վարքագծին հավանություն տալու հարցին:

Խորհուրդը գտնում է, որ վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալու հարցում, փաստաբանի և վստահորդի միջև փոխհարաբերություններում էական նշանակություն ունի վստահորդի դիրքորոշումը:

Փաստաբանի կողմից իր վստահորդին պատշաճ իրավաբանական օգնություն ցույց չտալու վարքագիծը երրորդ անձի (ոչ վստահորդի) բողոքի հիման վրա քննելիս, եթե հաստատվել է Կանոնագրքի պահանջին հակասող փաստաբանի գործողության կամ անգործության փաստը, Պալատի խորհուրդը կարող է կարճել կարգապահական վարույթը, եթե միաժամանակ առկա են հետևյալ 3 պայմանները՝

- վստահորդը տեղեկացված է իր փաստաբանի՝ պարտավորության ծավալին և այդ պարտավորությունը խախտելու փաստին.
- վստահորդը էական վնաս չի կրել փաստաբանի իրավախախտ վարքագծից.
- վստահորդը գրավոր կամ բանավոր հայտնել է իր՝ փաստաբանի նշված վարքագծին հավանություն տալու մասին:

Սույն գործի փաստերից հետևում է, որ Արթուր Սարգսյանը հավանություն է տվել իր փաստաբանների, այդ թվում՝ պաշտպան Տիգրան Եգորյանի գործողություններին, 12.01.2017թ. դրությամբ: Այս դիրքորոշման առումով, Պալատի խորհուրդն արձանագրում է, որ՝

- Արթուր Սարգսյանի դիրքորոշումը չի վերաբերում փաստաբան Տիգրան Եգորյանի անգործությանը (փաստաբանի վարքագիծը դրսևորվում է ինչպես գործողությամբ, այնպես էլ՝ անգործությամբ): Ընդ որում, վստահորդը կարող է հավանություն տալ փաստաբանի մեկ կամ մի քանի գործողություններին, ինչը չի նշանակում, որ նա կարող էր հավանություն տալ այն անգործությանը, որ էական ազդեցություն էր ունենալու նրա ազատության մեջ գտնվելու հարցին.
- Արթուր Սարգսյանի դիրքորոշումը ձևավորվել է մինչև կարգապահական վարույթ հարուցվելը, հետևաբար, Պալատի Խորհուրդը չունի հավաստի տվյալ, որով կհաստատվեր, որ Արթուր Սարգսյանը տեղեկացված է եղել իր պաշտպան Տիգրան Եգորյանին վերագրվող անգործության և դրա՝ իր նկատմամբ առաջացրած հնարավոր իրավական հետևանքների մասին.
- Արթուր Սարգսյանը կարգապահական վարույթ հարուցելուց հետո որևէ կերպ դիրքորոշում չի հայտնել իր պաշտպան Տիգրան Եգորյանին վերագրվող անգործության մասին:

Հետևաբար, Պալատի խորհուրդը գտնում է, որ Արթուր Սարգսյանը հավանություն չի տվել Տիգրան Եգորյանի անգործությանը, ավելին՝ իրազեկված չի եղել՝ ակտիվ վարքագիծ դրսևորելու՝ Տիգրան Եգորյանի պարտականության մասին:

*****

Ամփոփելով վերոգրյալը Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Տիգրան Եգորյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 2.6.1 և 2.7.2 ենթակետերի խախտման համար:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում խախտման բնույթը, համաչափության հիմնարար սկզբունքը, ինչպես նաև փաստաբան Տիգրան Եգորյանի անձը բնութագրող հանգամանքները:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը*՝….3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամանակը որոշում է փաստաբանների պալատի խորհուրդը*:

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցելու» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, Պալատի խորհրդի 05.06.2016թ. թիվ 16/8 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի նիստերի վարման ներքին ընթացակարգի 8.6-րդ ենթակետի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Տիգրան Եգորյանին (արտոնագիր թիվ 1187) ճանաչել մեղավոր Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2. և 2.6.1 ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Տիգրան Եգորյանի (արտոնագիր թիվ 1187) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ քրեական դատավարության բնագավառի թեմայով, 8 (ութ) ակադեմիական ժամ ժամաքանակով:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
Խորհրդի անդամ՝ Կարապետ Աղաջանյան